ՄԱՐՄԻՆԸ՝ ԿԵՆԴԱՆԻ ԶՈՀ ԱՍՏԾՈՒՆ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ.

*Հռ.12.1-2 – Արդ Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, որ ձեր **մարմինները մատուցեք** կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը: Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք Աստծու կամքը, թե որն է բարին, հաճելին ու կատարյալը*

Հարցը այն է՝ ինչպե՞ս մեր մարմինները մատուցենք կենդանի զոհ Աստծուն

*Բ Օր.18.1-3 – Այս կլինի քահանաների իրավունքը ժողովրդի կողմից և մատուցված զոհերի կողմից, դրանք լինեն արջառ, թե ոչխար: Քահանային պետք է տրվի **թիակը**, **ծնոտները** և **փորը**:*

Եբր. 4.14-16 – Արդ ունենք երկինքներով անցած մեծ Քահանայապետ՝ Հիսուսին՝ Աստծու Որդուն:

- *Նոր Կտակարանը մեզ հայտնում է, որ մեր Բարձրյալ Քահանան Հիսուսն է, և կա երեք բան, որ մենք պետք է բերենք Նրան... **թիակը**, **ծնոտները** և **փորը:***

I. ԲԵՐԵՔ ՈՒՍԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԶՈՀ. ԿՅԱՆՔԻ ԲԵՌՆԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՆՁՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

Ա Պետրոս 5.7 – Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՛ գցեք, որովհետև նա ձեզ հոգ է տանում: ***(Ուխտի բեռը)***

Մատթեոս 11.28-30 – Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ր ***հոգնածներ*** *ու* ***բեռնավորվածներ****, և ես հանգիստ կտամ ձեզ:*

Ես. 58.6 – Ահա սա է ծոմը, որին ես հավանում եմ. լուծի՛ր (1)անիրաւութեան կապանքները, (2)արձակի՛ր լծի կապերը. (3)Ճնշվածներին ազատի՛ր և (4)կոտրի՛ր ամեն տեսակ լուծ:

> *Եւ այն օրը կլինի որ նրա բեռը կվերցվի քո* ***ուսերից****, եւ նորա լուծը՝ քո* ***պարանոցից****, եւ լուծը* ***կկոտրվի (destroyed)*** *օծության պատճառով (Եսայի 10.27):*

- *Լուծը ոչ թե պարզապես հանվում է, այլ* ***կոտրվում է****, որպեսզի այլևս երբեք չվերադառնա:*
- *Սա խոսում է ճնշման, հոգսերի և ծանրությունների հեռացման մասին:*

II. ԲԵՐԵՔ ԾՆՈՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԶՈՀ. ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ և ՆԱԽԱՏԻՆՔԻ ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՆՁՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

*Քո մի **երեսին խփողին** մյո՛ւսն էլ մոտեցրու. նրան, ով քո վերարկուն **վրայից դանում է,** մի՛ արգելիր նրան շապիկդ էլ վերցնել (Ղուկաս 6.29):*

- *Այսինքն երբ մեզ հարվածում են խոսքերով կամ վատ վերաբերմունքով, բնական մարդը ուզում է պատասխանել: Բայց Քրիստոսի ճանապարհը խաչի ճանապարհն է.*

- *Նրա վրայից հանեցին վերարկուն, բայց փոխարենը ստացավ սուտ համբույր:*

  Իմ թիկունքը տվեցի ինձ հարվածողներին և իմ ծնոտները՝ մորուքս փետողներին, իմ երեսը չծածկեցի նախատինքից ու թքից (Եսայի 50.6):

  Հիսուսը դեռ խոսում էր, ահա եկավ Հուդան՝... Նա իսկույն մոտեցավ Հիսուսին ու ասաց. «Ողջո՛ւյն, Վարդապե՛տ», և համբուրեց նրան... (Մատթեոս 26:47,49):

III.ԲԵՐԵՔ ՍՏԱՄՈՔՍԸ ՈՐՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԶՈՀ. ԱԽՈՐԺԱԿԻ և ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՆՁՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

- *Անկառավարելի ախորժակը բերում է հոգևոր կուրության:*

  *Նա **իրենց ուզածը տվեց** նրանց և ուժաթափություն ուղարկեց նրանց անձերին (Սաղմոս 106.15):*

Ահա սա էր քո քույր Սոդոմի անօրենությունը.
(1) Ամբարտավանություն, (2) հացի կշտություն և (3) անհոգ հանգստություն ունեին...(Եզեկիել 16.49):

- *Երբ ստամոքսը հանձնվում է, Հգին զորանում է:*

  Ղուկաս 4.4 – Եվ Հիսուսը նրան ասաց. Գրված է. Մարդ միայն հացով չի ապրում, այլև Աստծու ամեն խոսքով (Բ Օր. 8.3):

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ